ՎԱԽՃԱՆՎԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ԿՅՈՔՉՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, օգոստոսի 18-ին Նյու Յորքում առնելով Միջին Գերմանիայի հայ համայնքների հոգևոր հովիվ, Հայաստանյայց Եկեղեցու բազմամյա սպասավոր Տ. Հակոբ քահանա Կյոքչյանի մահվան լուրը, Տեր Հոր անժամանակ մահվան առիթով ցավակցական հեռագիր հղեց Գերմանիայի հայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բեքճյանին և հանգուցյալի ընտանիքի անդամներին:

Հեռագրում մասնավորապես ասվում է.

«Գերմանիո Առաջնորդարանի Դիվանից խոր ցավով իմացանք անակնկալ մահվան մասին, սրտային տագնապի հետևանքով, Արժանապատիվ Տ. Հակոբ Ա. ՔՀՌ. Կյոքչյանի՝ հոգատար հովվի միջին Գերմանիայի Հայոց համայնքների:

Ս. Էջմիածնի խորանների առաջ սրտեռանդն աղոթում ենք հանգուցյալ Տեր Հոր հոգու խաղաղության և ընտանիքի անդամների մխիթարության համար: Թող Բարին Աստված ընդունի նրա ծառայասեր հոգին երկնքի արքայության մեջ և Սուրբ Հոգին մխիթարություն պարգևի հատկապես երեցկնոջ և իր հոտի բոլոր անդամներին՝ հեռավորաց և մերձավորաց:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Կիրակի Օգոստոսի 23-ին, հավարտ Ս. Պատարագի կկատարվի հատուկ հոգեհանգստյան պաշտոն:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

18 Օգոստոս 1998»

⁂

Հանուն Մայր Աթոռի Միաբանության և վանքի պաշտոնեության, Տ. Հակոբ քահանա Կյոքչյանի ընտանիքին, նրա անժամանակ մահվան առիթով, հանուն Մայր Աթոռի միաբանության և Վանքի պաշտոնեության, ցավակցական հեռագիր հղեց նաև Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

⁂

Տ. Հակոբ քահանա Կյոքչյանը ծնվել է 1938թ., Բեյրութում, Կիլիկիայի Սիս քաղաքից Բեյրութ գաղթած ընտանիքում: 1946 թ. հանգուցյալի

ընտանիքը տեղափոխվում է Հայաստան: 1956 թ. ավարտելով դպրոցը, պատանի Հակոբն ընդունվում է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան, որը հաջողությամբ ավարտելով 1961 թ., երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի տնօրինությամբ մեկնում է Ռուսաց Պատրիարքարանի Զագորսկի Ակադեմիան, ուր մեկ տարի ռուսաց լեզվի իմացության խորացմանը զուգընթաց ստանձնում է նաև միջեկեղեցական հարաբերությունների ամրապնդման պարտավորությունները: Ապա ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմության և հնագիտության բաժինը, որն էլ ավարտում է 1966 թ.՝ դիպլոմային աշխատանքի նյութ ունենալով «Ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցի ծագումն ու Բեռլինի կոնգրեսը» թեման:

1967 թ. Հակոբ սարկավագն ընդունվում է Խորհրդային Միության Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության Ազգային Ինստիտուտի Միջազգային հարաբերությունների բաժինը: 1968 թ. Վազգեն Ա Կաթողիկոսի հրավերով ստանձնում է Մայր Աթոռի փոխդիվանապետի պաշտոնը և յոթ տարի շարունակ բարեխղճությամբ կատարում իր պարտականությունները:

1973 թ. Վեհափառ Հայրապետի առաջարկով ձեռնադրվում է քահանա և ընտանիքի հետ միասին մեկնում Հնդկաստան՝ որպես հնդկահայ գաղութի հոգևոր հովիվ և Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի դասախոս: 1978–81 թթ. վարում է նաև Ճեմարանի տեսուչի պաշտոնը:

1982 թ. Տեր Հայրը վերադառնում է Մայր Աթոռ և ստանձնում Էջմիածնի Ս. Հռիփսիմե և Ս. Շողակաթ վանքերի վանահայրությունը: Նույն տարին մեկնում է Լիբանան՝ ստանձնելու հոգևոր հովվի պաշտոնը և դասավանդելու տեղի բարեգործական դպրոցներում, սակայն պատերազմի պատճառով վերադառնում է հայրենիք:

1985 թ. Վեհափառ Հայրապետի հրահանգով մեկնում է Գերմանիա և ստանձնում Քյոլնի և Հյուսիսային Գերմանիայի հոգևոր հովվի պարտականությունները, ուր յոթ տարի ծառայելուց հետո տեղափոխվում է Ֆրանկֆուրտ՝ որպես տեղի հայ համայնքի հոգևոր հովիվ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ